№ 52 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 9

1889

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 9 № 52

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կինը և իդեական կրթութեան խնդիրը. Նամակ Դօրպատից. Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բանւորական շարժումը Գերմանիայում. —ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վարագոյրի յետև.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՆԸ ԵՒ ԻԴԵԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Հասարակական կեանքի բնական կազմակերպութեան շնորհով մանուկները հէնց ծնվելու օրից մնում են իդեական սեռի ձեռքին, նրա ազդեցութեան տակ, նրանք անընդհատ չփվում են նրանց հետ։ Կինն է նրա սկզբնական դաստիարակողը, կրթողը, նա է մանուկին մեծացնում, քայլել, խօսել սովորեցնում, իւրաքանչիւր քայլը դիտում, սխալ արած քայլերը ուղղում, խելք, չարը բարիից ջոկել սովորեցնում, հետաքրքրութեանը բաւականութիւն տալիս, այլ և այլ հարցերին պատասխանում, լուծում, զանազան մութ երեոյթներ բացատրում, պարզաբանում, այս կամ այն յատկութիւնը զարգացնում, այս կամ այն հոգին, ուղղութիւնը տալիս. «մարդ չինում» և այլն և այլն։

Արական սեռի ազդեցութիւնը շատ աննշան է, որովհետև մանուկը նրա հետ համարեա թէ չէ տեսնվում, չէ չփվում, այն ինչ մօր կամ դայեակի ոտը կապված է, նրան փակել են, նա միշտ մանուկի մօտ է, միշտ նրա հետ է։ Անհերքելի է, որ ապագայ քաղաքացու և քաղաքացուհու մանկական կրթութիւնը, որը մեծ ազդեցութիւն և նշանակութիւն ունի նրա ամբողջ կեանքի համար, իդեական սեռի ձեռքին է, այն սեռի, որի մեծ նշանակութիւնը ուրանալ ենք ջանում, որին մենք մարդատեղ չենք դնում ասելով՝—«կին է էլի, մաղերը երկար՝ խելքը կարճ»։ Այսպիսի մի ծանր և պատասխանատու լուծ, որը ահագին նշանակութիւն ունի մարդկութեան համար, դրել ենք միայն կանանց վրա։ Բայց ինչ հիման վրա։ Մեր ժողովուրդը և առհասարակ տգամարդիկ շատ ստոր գաղափար ունեն կնոջ մասին, ինչ հիման վրա, հարցնում ենք, տգամարդը իրաւունք է համարում ծառայեցնել կնոջը, վերին աստիճանի ընդունակ այդ էակին իր քմահաճութիւններին, փոխանակ ազատութիւն տալու նրան՝ ձգտելու դէպի այն բանը, դէպի ինչը որ հակումն ունի։ Գուցէ կինը ընդունակ է լինել հասարակական գործող, զրադէտ, նկարիչ, ճարտարապետ. ինչ իրաւունքով ենք մեռցնում բնութիւնից տուած յատկութիւնները և այժով-զօռով, բռնութեամբ պատաստում ենք ուրիշ յատկութիւններ ու սրանով այլանդակում, դարձնում նրան բոլորովին անպէտք.... Բայց չը նայած այդ անբնական ընթացքին, այդ սեռը այնու ամենայնիւ իր մէջ պահել է դեռ շատ բան և յարմար դէպքերում ցոյց է տալիս իր ընդունակութիւնները։

Մարդկութիւնը անհատների գումարումն է, իսկ անհատների այսպէս ասած «մարդ դառնալը», ինչպէս ասեցինք, կախված է գլխաւորապէս իդեական սեռից։ Սրանից հասկանալի է որ անհատների գումարումն էլ, այսինքն մարդկութիւնը, նրա աճելը և զարգանալը ու «բարի պտուղ» տալը կանանցից է կախված, կամ հէնց նրանց ձեռքին է։ Միթէ կրկին բացատրութեան կարօտ է, որ մանկական սկզբնական կրթութիւնը մեծ նշանակութիւն ունի նրա «մարդ» լինելու վրա։ Ամբողջ սերնդի դաստիարակութիւնը կանանց ձեռքը տալով, մենք դիմադրութեամբ յանդգնում ենք պահել նրանց դեռ չզիթայած, յանդգնում ենք չը ճանաչել նրանց մարդկային և քաղաքացիական իրաւունքները։ Եւ եթէ այսօր մարդկային հասարակութիւնները թշուառ դրութեան մէջ են, դրա գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ նրանց «կէսը» ճնշված է, զրկված է ազատ զարգացման բոլոր պայմաններից, մանաւանդ տգէտ ժողովրդի մէջ։

Կանանց աղատութեան հարցում կնոջ բարձրագոյն ուսման մեծ նշանակութիւն է տրվում, որովհետև դա ամենաուժեղ միջոցներից մէկն է նրանց հասցնելու իրանց կոչման բարձրութեան։ Բարձրագոյն ուսումը տալիս է կնոջը զէնք ճակատ առ ճակատ կռուելու իր թշնամու դէմ և ազատ ու անվախ, համարձակ տարածելու իր սեռի մէջ իր գաղափարները։ Իդեական սեռի մէջ այս և այն դաղափարը տարածելու գործը աւելի մատչելի և յարմար է կանանց կամ օրիորդներին, որովհետև հասարակական կեանքի այժմեան կազմակերպութեան շնորհով դարձեալ, նրանք անմատչելի են արական սեռին։ Իսկ դաղափարներ տարածելու համար—հարկաւոր է ունենալ գաղափարներ, հարկաւոր է գիտենալ թէ ինչ պէտք է անել և ինչու համար, ինչպէս պիտի գնայ և ուր,—իսկ այս կը տայ բարձրագոյն ուսումը։

Բարձրագոյն ուսումը և առհասարակ կանանց հիմնաւոր կրթութիւնը այն արմատական միջոցներից մինն է, որով կարելի է թէ կանանց դարերից ի վեր կազմած սխալ, վատ և մեռասակար մտքերի մէջ յեղափոխութիւն մտցնել և թէ ստիպել տգամարդին ճանաչելու կնոջ իրաւունքները, արժանաւորութիւնը և այժը։ Բարձրագոյն կրթութիւնը, բացի դրանից, ամենալաւ միջոցներից մէկն է, որով կարելի կը լինի տանը փակված, ոչինչ չը չինող և մարդու ձեռքին նայող կնոջ առաջ աշխատանքի ճանապարհ բանալու և այդպիսով նրան աղատելու այն մշտական բարոյական ստրկութիւնից, որի մէջ գտնվում է անկախ ապրելու անկարող կինը։

Հիմնաւոր ուսումը կարող է այդպիսով կնոջ համար ոչ թէ միայն մի նոր աշխարհ բանալ, ոչ թէ միայն մեծ փոփոխութիւն գցել տգամարդու և կնոջ յարաբերութիւնների մէջ, այլ և նա կարող է աւելի արժանաւոր կացուցանել ամեն մի կնոջ հէնց այն դերի մէջ, որը մանաւանդ կիսակիրթ հասարակութիւնների մէջ կնոջ գլխաւոր և նոյն իսկ միակ կոչումն է համարվում։—Մեր խօսքը դաստիարակ-կնոջ և ամուսին-կնոջ մասին է։ Մենք հեռու ենք ենթադրելու անդամ, թէ կան այնպիսի հրէշաւոր հասկացողութիւններ տէր անձինք, որոնք կը թոյլ տան իրանց կարծել, թէ կինը, ձեռք բերելով բարձրագոյն ուսում, ունենալով բարձր կրթութիւն, չէ կարող լինել կին, չէ կարող օրինակելի դեր կատարել ընտանիքի մէջ իբրև մի ընտանիքի անդամ, իբրև երեխաների մայր։ Սակայն այդ ճանապարհը բանալու համար, հարկաւոր է, որ այդ տեսակ մտքերը արծարծվեն և տարբանան։ Եւ այդ տեսակ մտքերի արծարծելու գործում, մեր կարծիքով, նշանաւոր դեր պէտք է խաղան նոյն իրանք կանայք, նոյն իսկ մեր իդեական սեռից այն օրիորդները և կանայք, որոնք իրանց մտաւոր պատրաստութեամբ, կարող են այս և այն նոր մտքի քարոզիչ և յարուցանող լինել։

Հայ կանանց առաջադիմութեան համար ամենից շատ իրանք կանայք պէտք է աշխատեն. բայց տարաբաղդաբար մեր նոյն իսկ կրթված և ձեռնհաս կանայք այդ գործում շատ անտարբեր և անշարժ դիրք են բռնել։ Եթէ հարկաւոր է կանանց կեանքի մէջ փոփոխութիւն մտցնել,—դրա համար աշխատողներ պէտք է լինեն հէնց իրանք կանայք՝ եթէ հարկաւոր է մտցնել մեր հասարակութեան մէջ կանանց բարձրագոյն և առհասարակ ուսում ստանալու միտքը—դրա համար էլ իրանք կանայք պէտք է աշխատեն, աջակից լինելով այդ ուղղութեամբ աշխատողներին։

Վերջացնելով մեր խօսքը, հրաւիրում ենք մեր ձեռնհաս կանանց՝ հրապարակ դուրս գալ և ճակատ առ ճակատ պաշտպանել իրանց իրաւունքները, մամուլի և պրոպագանդայի միջոցով տարածել իրանց իրաւունքների և կնոջ գործունէութեան միտքը և դաղափարը։ Կնոջ ձեռքով կանանց իրաւունքները պաշտպանել, կնոջ բերանով կանանց բարմակողմանի առաջադիմութեան խնդիրը արծարծել,—կը նշանակի գործի աջողութեանը կրկնակի ոյժ տալ։

Ց. Դ.

ՆԱՄԱԿ ԴՕՐՊԱՏԻՑ

Ապրիլի 25-ին

Ձմեռն անցաւ, անգոյն ու տխուր օրերը տեղի կած դրութիւնից, առանց խնայելու այս կամ այն անձին, որոնք կապ ունեն ընկերութեան մեռելութեան հետ...

—

Հասաւ 1889 թվի յունվարի 8-ը։ Ընկերութեան վարչութիւնը ընդհանուր ժողով չը հրաւիրեց։ Ինչպէս երևում էր, ընկերութեան ղեկավարները աւելի հեռատեսութիւն համարեցին յետաձգել ժողովը էլի մի քանի ամսով, մարդիկ հաւաքելու համար, և «Հրատարակչական ընկերութեան» խնդիրը, դարձրին «մեր և ձեր» խնդիր։

Եւ ճշմարիտ. անցաւ մի քանի ամիս, լրագրութեան մէջ մերթ ընդ մերթ սկսեցին յարձակվել ընկերութեան ղեկավարների այդ յանդուգն անտարբերութեան վրա։ Պահանջում էին ընդհանուր ժողով նշանակել։ Ամեն կողմից լուրեր էին գալիս, որ Թիֆլիսի զանազան անկիւններում, զանազան մարդիկ, թռնդ պրոպագանդա են անում, անդամներ են հաւաքում, մարդիկ են պատրաստում։

Վերջապէս վարչութիւնը ընդհանուր ժողով նշանակեց ապրիլի 2-ին մի քանի տարի լետաբզիական քնով քնելուց, և ընկերութիւնը կատարելապէս մեռցնելուց յետոյ։

Եւ քանի մօտենում էր ընդհանուր ժողովի օրը, այնքան և Թիֆլիսի զանազան անկիւններում կատարվող պրոպագանդան, ինչպէս լսվում էր, թռնդ կերպարանք էր ստանում։ Այդ պրոպագանդայի բնաւորութեան մասին ամեն տեսակ և շատ զզուելի բաներ էին պատմում. պատմում էին, որ անդամներ են հաւաքվում ոչ թէ փոքր ի շատէ գրական-մտաւոր շրջաններին մօտիկ անձինքներից, ոչ թէ մի գրական ընկերութեան անուանը պատիւ բերող անձինքներից, այլ այնպիսիներից, որոնք ոչխարի նման դային և սրան սպիտակ քուէ տային, իսկ միւսին սև քուէ, հարկաւոր ժամանակն էլ փողոցային տեսարաններ սարքէին....

Գլխաւոր ուշադրութիւնը կենտրոնացած էր այն բանի վրա, թէ ովքեր պէտք է ընտրվեն, և զանազան անկիւններում անդամներ հաւաքողներն էլ այդ տեսակէտով էին ղեկավարվում։ «Արձագանքի» մարդիկը կարծում էին, որ ընկերութեան վերակենդանութեան «նախաձեռնողների» գլխաւոր նպատակն է հեռացնել ընկերութեան գործերից պ. Յովհաննիսեանին, և նրա մարդկանց։ Նրանք այդ «նախաձեռնողների» մէջ տեսնում էին «մշակականներ», և այդ պատճառով վճռել էին դիմադրել «մշակականներին»։

Խնդիրը մասամբ և պատուի խնդիր էր դարձել պ. Յովհաննիսեանի խմբի համար։

Սակայն այդ ենթադրութիւնը սխալ էր հիմնվվին։ Նպատակ դնել պ. Յովհաննիսեանին և ընկ. հեռացնել ասպարիզից, առանց մտածելու դրանց փոխարէն արժանաւորներին նշանակելու, կը նշանակէր «ջուր մաղել»։ Դա չէ եղել «նախաձեռնողների» նպատակը։ Դրանց նպատակն է եղել ընկերութեան ղեկավարներ ընտրել գործող անձինք, և այդպիսով ընկերութեան աւելի լաւ ուղղութիւն տալ։—Եթէ պ. Յովհաննիսեան խօսք կը տայ սրանից յետոյ ցանկալի կերպով գործել,—ասում էր նախաձեռնողներից մէկը, այն ժամանակ մենք նրան էլ նորից կընտրենք։

Այդպէս ուրեմն նախաձեռնողների կողմից հարցին և ընտրութեանը նեղ, շատ նեղ կուսակցական կերպարանք չէր տուած, այլ դրա փոխարէն ցանկութիւն կար փոխել տալ ընկերութեան բռնած ապարդիւն ուղղութիւնը, և այդ նպա-

տուին գարնանային զուարթ օրերին։ Փորձեցէք դուրս գալ փողոցը ճաշից յետոյ, գլխանքի ժամանակը, և դուք կը տեսնէք օրվայ այդ ժամանակին երկու սեռի հասարակութիւնը շտապում է դէպի այգիները. տիկինները և օրիորդները բռնած փոքրիկ, երբեմն մի մկան մեծութեան չափ շների կապը, զանազան ժապաւէններով նախշած, իսկ պարոնները, ինչպէս և հարկ է տղամարդու արժանաւորութեանը համեմատաբար կնոջ հետ, բռնած՝ ունեն Դանիայի ահագին շների պողպատի շղթան։ Հարկաւոր է մեծ զգուշութիւն ունենալ, որպէս զի փողոցով անցնելիս մարդ չը խճճվի անթիւ շների և շնիկների կապերի ու շղթաների մէջ։ Մի անզգոյշ քայլ, ով գիտէ, ինչ տխուր հետեանք կարող է ունենալ. օրինակի համար, եթէ մէկի շանը դիպաք և pardon (ներողութիւն) չասացիք, շնասէր եւրոպացին կարող է դրանով իր պատիւը խախտված համարել, և ահա դուք հրաւիրված էք մենամարտութեան։

Մի շատ ծիծաղաշարժ տեսարան է ներկայացնում ուսանողների մենամարտութիւնը. երևակայեցէք կուի դաշտը, ուր երկու հակառակ կողմերի կօրպօրացիաներին պատկանող ուսանողութիւնը հաւաքված անհամբեր սպասում է մենամարտողներին։ Վերջապէս ահա և նրանք, երկու հակառակորդները, իրանց սեկունդանտների ուղեկցութեամբ, խրոխտ քայլերով մտնում են պատերազմի դաշտը։ Խնդիրը պատուի խնդիր է և արիւնով պիտի վերջանայ։ Նրանք հագած են պողպատի կամ պղնձի սաղաւարտներ, որոնք ծածկում են ամբողջ երեսը և վիզը, թողնելով երկու ծակ միայն աչքերի համար, մարմնի միւս մասերը նոյնպէս ապահով են և պաշտպանված հրուանդների դէմ, միմիայն կուրծքն է և ուսերը որ մերկ են վերը տալու և վերը ստանալու համար։ Այդ երկաթի զգեստումը ուսանողը իսկապէս միջնադարեան խաչակիր զինուորի է նմանում։ Սովորաբար կռւում են բութ սրերով, որոնց ծայրերը միայն ասեղի դլխի չափ սրած են, այնպէս որ նրանով կարելի կը լինի միայն մարմինը քիչ չանկռել։ Մի քանի արհամարհական հայեացք գցելուց յետոյ միմեանց վրա և հանդիսականների վրա, մենամարտողները մօտենում են իրար։ Այդ րոպէին նրանց ատելութիւնը այնքան մեծ է, որ արհամարհում են մի խօսք անգամ արտասանելու, և սեկունդանտների միջամտելուն, թէ արդեօք նրանք կը ցանկանային գործը խաղաղութեամբ վերջացնել.—«ոչ, արիւն» այս է լինում երկու կողմի կարճ պատասխանը։

Վերջապէս կռիւն սկսվում է և մենամարտողները կպչում են. մի քանի հարուածներ և դիցուք մէկի մերկ ուսի կամ կրծքի վրա մի փոքրիկ կաթիլ արիւն երևաց. այդ բաւական է, նա արդէն յաղթված է, և պատերազմի դաշտից փախուստ է տալիս։ Թէև այդ փոքրիկ ասեղի վերքը համապատասխան չէր ոչ նրանց անչափ ատելութեանը ու վրէժխնդրութեանը և ոչ էլ միջնադարեան երկաթի զգեստին, այնու ամենայնիւ յաղթողը բաւականութիւն ստացաւ,—առաւել ևս—նա շրջապատված է այժմ անասելի փառքով։ Պէտք է տեսնել թէ որպիսի խրոխտ քայլերով ու հպարտ դէմքով նա պտտում է Դօրպատի փողոցները, նա դիտէ որ գրաւում է շատերի, մանաւանդ կանանց ուշադրութիւնը. «Նայեցէք, նայեցէք,—լսում է ամեն կողմից,—ահա այն քաջը, որ յաղթել է՝ այն ինչ քաջին»։

—

Ուսանողութիւնը Դօրպատի գլխաւոր տարրն է կազմում և համարձակ կարելի է ասել, որ քաղաքը միմիայն նրանով է կեանք ստանում. նա շատ բարձր պատիւ ունի ամեն դասակարգի ժողովրդի աչքում, իսկ վաճառականութիւնը խորին յարգանքով է վերաբերվում դէպի ուսանողական դատաստանը, որը կարող է զրկել նրան շատ բանից, եթէ միայն նա անխղճմտաբար վարվի մի որ և է ուսանողի հետ։

Եթէ մի կողմից գերմանական ուսանողութիւնը իր,—հայկական սեռով ասելով,—փոքր ինչ երեխայական յատկութիւններով ծիծաղ է շարժում, միւս կողմից մենք զարմանում ենք նրա անխոնջ աշխատասիրութեան վրա իր մասնագիտութեան մէջ, և ուրիշ վսեմ բարոյական շատ յատկութիւնների վրա, որոնցից զուրկ է առհասարակ ռուս և միւս ազգերի ուսանողութիւնը։ Մի ոգի ամուր կերպով միացնում է այս բազմաթիւ ուսանողութեան անդամներին։ Լինել բարի, ազնիւ մարդ, օգտակար քաղաքացի և անձնուէր, այս է գերմանական ուսանողութեան ընդհանուր տիրապետող ոգին։ Թէ ինչպէս է վարժվում գերմանացի ուսանողը ընդհանուրի օգտին ծառայել, կարող էք երևակայել Նրանից, որ Դօրպատի հրաշէջների գունդը համարեա ամբողջապէս կազմված է ուսանողներից, որոնց թւում կայ և մի հայ ուսանող։

Տ. Մ.

ՆԱՄԱԿ ԴՈՒԲՈՒԱՅԻՑ

—

Մայիսի 3-ին

Ոչ մի նահանգում չը կան այն եղեռնագործութիւնները, որոնք կատարվում են ներկայ ժամանակս Դուբայի գաւառում։ Մարդասպանութիւն, տաւարազողութիւն, տուն և խանութ կողոպտելը՝ սովորական բաներ են դարձել Դուբայում։ Սրա վրա աւելացնենք՝ աւազակութիւնները։ Արդէն «Մշակի» ընթերցողներին յայտնի է, որ այժմ Դուբայի գաւառում գտնվում են յայտնի աւազակապետներ, որոնք են Մաշադի-Մէջիդը, Նօսրադին-բէկը և եօթը հոգի Սիբիրից ուրիշ փախստականներ. յիշեալ ինը հոգի աւազակների խումբը չրջում է գիւղերը. սրանք մի այնպիսի աւազակների խումբ են կազմում, որ դեռ մինչև այսօր Դուբայի գաւառում տեսնված չէ. սրանց երևալով մի ամբողջ տարի է արդէն գաւառս մի քանի յայտնի գիւղերը համարեա թէ փչացրած են, թալանած են, տաւարները, ձիաները և տան կահ-կարասիները փախցրած են։ Ով համարձակվում է չարագործներին ընդդիմանալ՝ ստանում է իր արժանաւոր պատիժը, այն է գնդակահար է լինում։ Ինչպէս սկսվեց գարունքը, բացվեցան ծառ ու ծաղիկները, յիշեալ աւազակները օր չէ անցնում, որ մարդ չը սպանեն, և քաղաք եկող գնացող գիւղացիներին չը կողոպտեն։ Անցեալ ամսի 27-ին, առաւօտեան ժամը 10-ին, մեր քաղաքացի Ա. Ն—եանցին իր Ս. ընկերոջ հետ միասին, քաղաքից 20. վերստ հեռաւորութեան վրա կողոպտել են. տարել են, ինչպէս հաստատ աղբիւրից իմացանք՝ 850 բուբլու չափ ապրանք, այն է 3 հատ ձիաներ, ոսկի ժամացոյցներ, հրացաններ, և արծաթեղէն իրեր։ Ի հարկէ, սրա մասին յայտարարված են տեղական դատաւորներին։ Գաւառապետը, որքան ջանք է անում վերջ տալու աւազակութիւններին, նրան չէ աջողվում. եթէ այս միջոցներում աւազակները չը կալանաւորվեն, այն ժամանակ մեր վաճառականների զրոյթիւնը անտանելի կը լինի, որովհետև ոչ գիւղացին կարող է դալ քաղաք ապրանք առնելու, ոչ էլ մենք կարող ենք գիւղերը գնալ մեր գործերի համար, քանի որ մեր առևտուրը գլխաւորապէս գիւղացիների հետ է։

Այժմ Դուբայում առևտուրը շատ ընկած է, այնպէս որ վաճառականները խանութներում ենջկուց նեղացած՝ ճարահատված ամեն օր գընում են այգիները քէֆ անելու։ Ի հարկէ, սա աւելի լաւ է դարձեալ, քան թէ թղթախաղով զբաղվել։

Մ. Ա.

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են մայիսի 3-ից հետեւեալը։ «Երեք օր է ինչ երեկոներին սաստիկ անձրևներ են գալիս և հեղեղներ են գոյանում։ Ինչպէս երևում է քաղաքի չրջականերում աւելի շատ է տեղում անձրևը, որովհետև Հրազդան գետի ջուրը բաւական բարձրացել է։ Առատ անձրևների գալու պատճառով սպասվում է ցորենի աւելի ընկնելը։ Այժմ քաղաքում հացի լիտրը 36 կոպէկ արժէ։ Ոչխարի մսի ֆունտը 10 կոպէկ արժէ։»

—

Ինչպէս մեզ գրում են Երևանից, թեմական դպրանոցի նոր ընտրված հոգաբարձուներից բժիշկ Լեոն Տիգրանեանց հրաժարական է տուել իր պաշտօնից։

—

Ստացանք ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ պ. Նիկողայոս Զիլինգարեանից նրա հեղինակած «Армянская Мелодія» նօտաների 40 օրինակը, որ պարոնը խնդրում է մեզ ծախել և ծախելուց ստանալի գումարը նուիրում է յոգուտ Թաֆֆիի մահարձանի կառուցման։ Ծախելով նօտաների իւրաքանչիւր տեսակը 1 ր. 25 կ., ամբողջ արդիւնքը 40 օրինակից կը լինի 50 բուբլի։ Թիֆլիսի երաժշտական մագազինի տէրը, պ. Սուղանաճեան, բարի եղաւ յանձն առնելու յիշեալ նօտաները իր մագազինում ծախելու։ Կարելի է դիմել և «Մշակի» խմբագրութեան։

—

ԲԱԹՈՒՄԻՑ գրում են մեզ հետեւեալ տարօրինակ երևոյթի մասին։ Այս օրերս վախճանվեց այս քաղաքում, երկար հիւանդութիւնից յետոյ, մօտ 90 տարեկան մի ծերունի, որը կատարելապէս սպիտակահեր էր։ Բայց իր երկար հիւանդութեան ժամանակ ծերունու մազերը սկսեցին սևանալ, այնպէս որ նա մեռաւ գրեթէ կատարելապէս սևացած մազերով։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 18-ին այստեղ սպանված գտնվեց Թիֆլիսի պարսից հիւպատոսարանի մի աստիճանաւոր, որին մաքրաշում փաթաթված՝ դրել էին մնդուկի մէջ և փակել էին։ Կասկածը ընկնում է ծառայի վրա, որը դեռ ևս չէ գտնված»։

—

Ապրիլի 28—29 գիշերվայ ժամը 1½-ին, ինչպէս մեզ գրում են, զդալի եղաւ Կարսում երկրաշարժի բաւական զօրեղ հարուած։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են, որ մօտ օրերս այդտեղի մրգավաճառները Ալէքսանդրապօլի Նորաշէն սուրբ Աստուածածին եկեղեցուն նուիրեցին մի մեծ բրոնզեայ ոսկեզօծ խաչ, որը մի քանի պուդ ծանրութիւն ունի։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Հոգաբարձական ընտրութիւնները թեմական փոխանորդի հրամանով յետաձգված են մինչև նոր անօրինութիւն։ Այդ մասին զանազան ենթադրութիւններ են անում, բայց ոչինչ հաստատապէս չը գիտեն»։

—

տակին հասնելու համար ամենքն էլ համամիտ էին այն կարծիքին, թէ պէտք է ընտրել ցանկացած ուղղութեան համակրող, և միմեանց մէջ, որքան կարելի է, համերաշխ մարդիկ։

«Նախաձեռնողների» կուսակցութիւնը շատ նեղ կուսակցութիւն չէր, և ոչ էլ անմիջական կապ ունեցող «Մշակի» հետ, ինչպէս ենթադրում էին շատերը։ Հարկաւոր է աչքի անցնել կանդիդատների այն ցուցակը, որ կազմված էր դրանց կողմից, և ամեն ոք կը համոզվի մեր ասածի ճշմարտութեան մէջ։

Ես բոլորովին ցանկութիւն չունեմ ծածկելու այդ ցուցակի բովանդակութիւնը, և որպէս զի ոչ ոք չը համարձակվի կասկածել իմ ասածի մասին, ես փաստեր առաջ կը բերեմ։ Այդ ցուցակի մէջ մտան թէ նոր անձինք, և թէ ընկերութեան հին ղեկավարողներից այնպիսիները, որոնց մասին այն համոզմունքը կար, թէ նրանք օգտակար կը լինեն։ Բացի դրանից մտան և այնպիսի անձինք, որոնք չեն էլ եղել նոյն իսկ նախապատրաստական ժողովներում, չեն մասնակցել այդ ցուցակների կազմելուն, և երկար ժամանակ չեն էլ իմացել թէ այդ ցուցակների մէջ իրանց թեկնածութիւնը կայ։

Իբրև կանդիդատներ ընկերութեան վարչութեան համար որոշված էին հետեւեալ անձինք. բժշկապետ Տէր-Գրիգորեան (ընտրվեց), բժշկապետ Նաւասարդեան (հրաժարվեց քուէարկվելուց), Ա. Վարդապետեան (հին գանձապահը, ընտրվեց), ինժենէր Եսայեան (հին վարչութեան անդամ), ինժենէր Գրիգոր Կիրակոսեան (ընտրվեց), Գէորգ Բաշինջաղեան (ընտրվեց), «Աղբիւրի» խմբագիր Տ. Նաղարեան, Սիմէոն Հախումեան և փաստաբան Յակոբ Տէր-Յովհաննիսեան (հրաժարվեց քուէարկվելուց)։

Իսկ խմբագրական մասնաժողովի համար հետեւեալ թեկնածուները. պ. Գաբրիել Միրզոյեան (ընկերութեան հիմնադիրներից մէկը, ընտրվեց) էմնօզրաֆ Ստեփաննոս Զէլինսկի, գիւղատնտես Ալէքսանդր Քալանթար (որի անունը յայտնի է և հայոց գրականութեան հետեւողներին՝ ընտրվեց) ուսուցիչ Ռ. Միքայէլեան (հրաժարվեց քուէարկվելուց), ընդգէտ Լեոն Սարգսեան (ընտրվեց), Խ. Մալումեան և իրաւաբանութեան կանդիդատ Յակոբ Տիգրանեան (ընտրվեց)։

Բացի դրանցից, նախաձեռնողները ունէին էլի մի քանի, եթէ այսպէս կարելի է ասել, կողմնակի կանդիդատներ, որոնց վարչութեան կամ խմբագրական մասնաժողովի մէջ մտնելը հաւանական և օգտակար էր համարվում։ Դրանցից էր պ. Փիլիպոս Վարդանեան, որին ցանկանում էինք խմբագրական մասնաժողովի համար ընտրված տեսնել, քանի որ նա այնտեղ աւելի օգտաւէտ կարող էր լինել, քան թէ վարչութեան ատենապետ ընտրվելով. դրանցից էր և պ. Գ. Ենգիբարեան, «Արձագանքի» խմբի մի անդամը և ուրիշները։

Ես այդ մի քանիսին համարում եմ կողմնակի կանդիդատներ, հետեւեալ պատճառով։ Մեզ քաջ էր յայտնի, որ դրանց համար ձայն պէտք է տան «Արձագանքի» մարդիկ, ուրեմն եթէ «մշակականներն» էլ իրանց բոլոր ձայները դրանց համար տային, այն ժամանակ դրանք կընտրվէին ձայների ահագին առաւելութեամբ, մինչդեռ մեր միւս կանդիդատները, որոնց համար ձայն չէին տալու միւս կուսակցութեան մարդիկ, պէտք է համեմատաբար շատ քիչ ձայն ստանային, և այդպիսով նսեմանային, թէև դուցէ և ընտրված էլ լինէին։ Ահա այդ պատճառով «մշակականները» այդ տեսակ մի քանի կողմնակի կանդիդատներին միայն մի քանի ձայներ պիտի տային։

Այդ տեսակ կանդիդատների ցուցակ պատրաստած նախաձեռնողները, ոգեորված ընկերութեանը ոգի տալու մտքով՝ եկան առաջին ժողովին, նախօրօք բացարձակ և մարդավարի կերպով պրոպագանդա անելով ընկերութեան ապագայի մասին, ոչ թէ միայն մասնաւոր կերպով, այլ և հրապարակով, մամուլի միջոցով։

—

Հասաւ ապրիլի 2-ը։ Թիֆլիսի դումայի դահլիճը մի չը տեսնված պատկեր էր ներկայացնում։ Մի ժամանակ «Հրատարակչական ընկերութեան» նիստերին ներկայ էին լինում 7 կամ 8 հոգի, իսկ այդ օրը ներկայ էին մինչև 70 անդամ։ Անդամների թիւը 13-ից հասել էր 85-ի։ Հետաքրքրութիւնը այնքան մեծ էր, որ դումայի վերնատունն էլ ներկայ էր ահագին բազմութիւն՝ մարդկանց և կանանց։

Տեսնելով այդ սկզբնական ոգեորութիւնը և հետաքրքրութիւնը, ես զիմեցի իմ բարեկամներից մէկին հետեւեալ խօսքերով.

«Նպատակի մի մասը արդէն իրագործված է. այնպիսի իրարանցում զցելուց և այնպիսի հետաքրքրութիւն շարժելուց յետոյ, դժուար թէ ընկերութիւնը կարող լինի հեշտութեամբ թըմրութեան մէջ ընկնել»։

Ժողովը սկսվեց ու վիճաբանութիւնների ընդդէմ պարզ էր արդէն որ ժողովի մէջ երեք կուսակցութիւն կայ։

Այդ կուսակցութիւններից երկուսը, այն է նախաձեռնողների, կամ ինչպէս ժողովականներն էին ասում, «մշակականների» կուսակցութեան և «արձագանքականների» մրցումը նախատեսնելի և պարզ էր։ «Մշակականները» զժգոհ ընկերութեան անգործութիւնից, սխալ ուղղութիւնից, կամենում էին փոխել ուղղութիւնը, վերջ տալ այդ մեռելութեան, և ուրեմն առաջ մղել այդ նոր ուղղութեան և եռանդուն գործունէութեան համար ընդունակ մարդիկ։ «Արձագանքականների» համար այդ բանը մի տեսակ պատուի խնդիր էր առաջ բերել։ Պ. Յովհաննիսեան իւրայիններով պէտք է նախ իրան և իր կուսակիցներին պաշտպանէր, պէտք է արդարացնէր իր արածները, պէտք է աշխատէր արգելք դնել դիմադրականների հարուածներին, և վերջապէս պէտք է աշխատէր պահպանել ընկերութեան գործերում իր և իրայինների ազդեցութիւնը։

Ահա դա էր այդ երկու կուսակցութիւնների մրցման հիմքը, և այդ նախատեսնելի էր։ Թիֆլիսի հայոց ինտելիդենցիային և գրական չրջաններին փոքր ի շատէ ծանօթ անձը այդ ժողովում հեշտութեամբ կարող էր տեսնել թէ որոնք են կազմում այդ երկու կուսակցութեան ղեկավարները, և որոնք են դրանց անդամները։

Բայց հէնց առաջին ընդհանուր ժողովում աչքի ընկաւ և մի ուրիշ բան, և այն էլ մի շատ անախորժ բան։ Երևում էր, որ այդտեղ կայ մի խումբ ուրիշ մարդիկ, բաղկացած ամեն տեսակ պարապմունքի, զանազան չրջանների, և մեծ մասամբ մի գրական ընկերութեան հետ ոչինչ կապ չունեցող անձինքներից, որոնք խմբվել և ժողով են եկել գլխաւորապէս միայն այն պատճառով, որ նրանց մի քանի մոթ անձինք քաշել և բերել են, որպէս զի իրանք էլ խառնված լինեն այդ բանի մէջ։ Վիճաբանութիւնների տաքանալուց և ապագայ ժողովներից երևեցաւ, որ թայֆայական ձգտումներով կուրացած խմբակը ներս է բերված այն գրական Արշակաւանի ձեռքով, որի անունը վաղուց արդէն ջնջված է հայոց մա-

Այս ամառ, ինչպէս հաղորդում է «Իվերիա» լրագիրը, Ռուսաստանից երկու խումբ մասնագէտներ պէտք է գան՝ Կովկասում և Անդրկովկասում ոսկէ հանքերը հետազօտելու համար։ Մի խումբը պէտք է գնայ հիւսիսային Կովկաս և հետազօտէ այն տեղերը, որտեղ մի անգամ հետազօտել է Սիբիրի ոսկու հանքերի մասնագէտ-հետազօտող հանդուցեալ Սիդօրով և որոնց հետազօտելու ժամանակ յայտնվել է ոսկի հիւսիսային Կովկասի մի քանի տեղերում։ Դժբաղդաբար Սիդօրովին հիւանդութիւնը արգելք եղաւ իր հետազօտութիւնը մի կատարեալ հետևանքին հասցնելու։ Ուստի յիշեալ խումբը պէտք է շարունակէ Նրա սկսած գործը և պէտք է հետազօտէ այն տեղերը, որտեղ յայտնվել է ոսկի։ Իսկ միւս խումբը պէտք է կատարէ աւելի դժուար և աւելի ծանր գործ. նա ոսկի որոնելու համար պէտք է հետազօտէ ամբողջ Անդրկովկասը, բացի Բաքուի նահանգից։

—

«Тифл. Листокъ» լրագիրը լսել է որ վրաց ինտելիգէնցիան դիտաւորութիւն ունի ձեռնարկել Թիֆլիսում մի հատ ամսագրի հրատարակելուն, վրացերէն լեզուով։ Ամսագիրը կը կրէ «Վրաց ամսագիր» վերնագիրը։

—

Մենք հաղորդած էինք արդէն որ մեր յայտնի դերասան պ. Ադամեանի առողջութիւնը, ըստ երևոյթին լաւացել է, քանի որ նա հրաւիրված է Զմիւռնիայում մի քանի ներկայացումներ տալու։ Այդ լուրը հաստատում են այժմ և տեղական ռուս թերթերը։

—

Քանի մի շաբաթ է արդէն որ եղանակը ԹԻՖԼԻՍՈՒՄ անձրևային է։ Ամեն օր քիչ քիչ անձրև է գալիս, հովացնելով օդը և ոչնչացնելով փողոցների փոշը։ Այսպիսով ներկայ տարվայ գարունը Թիֆլիսում շատ զուրեկան է։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Շատ հաւանական է, որ Երուսաղէմի Յարութիւն պատրիարքը մայիսի 2-ին կամ 3-ին Պոլսից Երուսաղէմ ուղևորվի։ Ֆինանսների մինիստրութիւնը խոստացել է մինչև այդ օրը կարգադրել Երուսաղէմի պարտքի վճարման համար հաւաքված հայոց զինորական տուրքի խնդիրը»։

—

Լոնդոնի «Times» լրագիրը հաղորդում է, որ Թիւրքաց Սուլթանը կարգադրել է բանտարկել քուրդ աւազակների գլխաւոր Մուսա-բէգին, այն աւազակութիւնների և սպանութիւնների համար, որ նա վերջին ժամանակներս գործել է Մուշի շրջաններում։

—

Մեզ հաղորդում են, որ պ. Տիգրան Նազարեան, «Աղբիւրի» խմբագիրը, խնդիրք է ներկայացրել կառավարութեան, որով թոյլատրութիւն է խնդրում Թիֆլիսում հայերէն լեզուով մի պատկերազարդ շաբաթաթերթ հրատարակելու, «Տարեղ» անունով։

—

Մեզ ուղարկված է «Գեարամի և Ալիի հեքիաթը» վերնագրով մի գիրք, որը Աշեղ Զիւանիի աշխատութիւն է, և հրատարակված է Ալեքսանդրօպոլում պ. Գ. Սանոյեանի ձեռքով։ Այդ ժողովրդական բաւական մեծ հեքիաթը փոխադրված է տաճկերէնից. եթէ այդ հեքիաթը իր հիւսվածքի հետաքրքրութեան հետ միասին պահպանած լինէր ժողովրդական բուն ոգին, նա շատ գեղեցիկ նիւթ կը լինէր ժողովրդական ընթերցանութեան համար։

—

Թիւրքիայի Զմիւռնիա քաղաքից մեզ գրում են. «Զմիւռնիայի գաւառական ընդհանուր ժողովը ընտրվեց։ Մելքիսէդեկ եպիսկոպոսի կուսակիցները չարաչար յաղթվեցան։ «Արևելեան Մամուլի» խմբագիր պ. Մամուրեան և հրապարակագիր փաստաբան պ. Չելենկերեան, որոնք Զմիւռնիայի մէջ կարևոր անձնաւորութիւններ են, չընտրվեցան։ Գաւառական ընդհանուր ժողովը հաւանական է համարում, որ Զմիւռնիայի առաջնորդ կընտրվի Այվազեան Յովսէփ վարդապետը, որը այստեղ կարողացել է բաւական համակրութիւն ղրաւել։»

—

Ուրբաթ օր, մայիսի 5-ին, կայացաւ «Հրատարակչական ընկերութեան» ընդհանուր ժողովը։ Ներկայ էին 75 անդամ. ժողովին նախագահեց պ. Յ. Տիգրանեան. վարչութեան նախագահ պ. Փ. Վարդանեան—համաձայն առաջին ընդհանուր ժողովի որոշման՝ տեղեկութիւններ տուեց ընկերութեան գոյքի, գրքերի և դիւանական թղթերի մասին, բայց շատ համառօտ և անկատար կերպով, յայտնելով որ այդ բոլորի մասին կատարեալ տեղեկութիւն տալու համար երկար ժամանակ է հարկաւոր, և վարչութիւնը ապագայում այդ մասին աւելի ճիշդ տեղեկութիւն կը ներկայացնի։ Ապա կարդացվեց վարչութեան կազմած 1889 թուի նախահաշիւը, որից երևում է, որ ընկերութիւնը մուտք ունենում է 1900 բուբլի, և այդքան էլ ծախս պէտք է լինի։ Դրանից յետոյ ժողովը ընտրեց խմբագրական մասնաժողովի մնացած երկու անդամներին. ընտրվեցան պ.պ. Յակոբ Տիգրանեան և Յարութիւնեան։ Վարչութեան քարտուղարի պաշտօնի համար ընտրվեց պ. Գ. Շահբուդաղեան։ Քուէարկութեան առիթով տեղի ունեցած վիճաբանութիւնների ժամանակ ժողովի մէջ այնպիսի ագեղ դրդողութիւններ տեղի ունեցան որ ժողովականների անհամեմատ մեծամասնութիւնը, մօտ յիսուն հոգի, հեռացան ժողովից, այնպէս որ ժողովի շարունակութեանը ներկայ էին միայն 26 հոգի։ 26 հոգուց բաղկացած ժողովը հաստատել է վարչութեան կազմած նախահաշիւը, որոշելով տարեկան 300 բուբլի վարձատրութիւն տալ քարտուղարին և դրամատարին, թէև այդ մասին վարչութիւնը հարց չէ դրած եղել։ Իսկ թէ որ կանոնադրութեան համաձայն է նոյն ժողովում յարուցած հարցը մի և նոյն ժողովում վճռել՝—առանց վարչութեան կողմից ներկայացրած լինելու,—այդ մի հարց է։

—

Ամսիս 7-ին տեղի ունեցաւ Թիֆլիսի Յովհաննէս-Մարիամեան օրիորդական դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնը, սրբազան առաջնորդի նախագահութեամբ։ Մինչև այժմ այդ դպրոցը կառավարվում էր հիմնադրի կողմից նշանակած մարդկանց ձեռքով, իսկ այժմ, համաձայն հանգուցեալ Գէորգ կաթողիկոսից տուած կոնդակի, պէտք է ընտրվէին Թիֆլիսի երեք եկեղեցիներից չորս-չորս պատգամաւորներ, որոնք և պէտք է կատարէին հոգաբարձական ընտրութիւնը։ Ընտրված պատգամաւորներն էին՝ պ.պ. Զիլթախեան, բժ. Տէր-Գրիգորեան (Թիֆլիսեցի), Բուղդանեան, Զմշկեան, Ա. Յովհաննիսեան, բժ. Շահ-Պարոնեան, Ն. Տէր-Ղևոնդեան, իշխան Կ. Բէհբութեան, Ն. Խոսրովեան, Ե. Խոսրովեան, Գ. Շահբուդաղեան և Լ. Մէլիք-Բէգլարեան։ Ընտրութեան ներկայ էին 11 պատգամաւորներ։ Հոգաբարձու ընտրվեցան՝ պ.պ. Յ. Խատիսեան (միաձայն), բժ. Շահպարոնեան (9 ձայնով), բժ. Ա. Անանեան (8 ձայնով), Գ. Աքիմեան (8 ձայնով), կանդիդատ՝ Ա. Մանթաշեան (7 ձայնով)։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

—

Բերլինից եկած հեռագիրները արդէն բաւական գաղափար են տալիս բանւորական այն շարժման մասին, որ ղղրդեցնում է Գերմանիայի հանքագործական նշանաւոր մի քանի կենտրոններ։ Այդ բանւորական շարժումը կրկնակի նշանակութիւն ունի, որովհետև իշխան Բիսմարկ շատ անգամ պարծանքով յայտնել է, որ Գերմանիայի սահմաններում բանւորական շարժումներ մեծ չափով առաջ գալ չեն կարող, քանի որ կառավարութիւնը հոգում է նրանց բարեկեցութեան մասին, և այլ այդպիսի բաներ։

Մենք յիշում ենք, թէ ինչպէս գերմանական կառավարութեան շատ ներկայացուցիչները մի տեսակ հեգնութեամբ էին վերաբերվում դէպի Ֆրանսիան այն ժամանակ, երբ Դեկազվիլի կողմերում բանւորների շարժում առաջ եկաւ, կամ երբ Բէլգիան դարձաւ նոյնպիսի խառնակութիւնների ասպարէզ։

Այժմ այդ տեսակ շարժումները սկսվել են Գերմանիայում, և այն էլ շատ հսկայական կերպով. շարժման մէջ մասնակցում են միանգամից վաթսուն իննսուն հազար բանւորներ։ Բերլինից եկած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ շարժումները չը սահմանափակվեցան սովորական ցոյցերով, այլ բանը հասաւ կատաղի կռիւ՝ բանւորների, ոստիկանութեան և զօրքի մէջ. տեղի ունեցան սպանութիւններ, շատերը վիրաւորվեցան, և կատաղած ամբոխը այդ բոլորի ժամանակ ջարդում էր տների պատուհանները և ձեռքի տակ ընկած ամեն բան։

Հասկանալի է ուրեմն, թէ ինչու այժմ Բերլինում մեծ տպաւորութիւն թողեց այդ շարժումը, և անմիջապէս կայսրի և իշխան Բիսմարկի մասնակցութեամբ ժողով եղաւ այդ մասին խորհրդակցելու համար։ Կայսրը իր մօտ կանչեց բանւորական պատգամաւորներին, և թէ ինչ ասեց նա, այդ յայտնի է մեր ընթերցողներին արդէն լոյս տեսած հեռագիրներից։

Կառավարութիւնը բացատրութեան կանչեց նոյնպէս և հանքագործարանատէրերին։ Տէրերը այժմ համաձայնվում են աւելացնել աշխատանքի վարձը։ Բացի դրանից բանւորները պահանջում են աշխատանքի ժամերն էլ քչացնել։ Դեռ ևս վերջնական համաձայնութիւն այդ կէտերի վերաբերմամբ չէ կայացել, և առ այժմ գլխաւոր ուշադրութիւնը դարձրած է յուզմունքների առաջն առնելու վրա։

Բանւորները պէտք է ասել, իրանց պահանջների մէջ շատ պինդ են. դրա գլխաւոր պատճառներից մէկը, հարկաւոր է նկատել, այն է, որ իրանք բանւորները գիտեն, թէ որքան արդիւնաւոր է դարձել հանքագործական արդիւնաբերութիւնը իրանց տէրերի համար։ Մենք մեր ձեռքի տակ ունենք պաշտօնական թուեր, որոնցից երևում է, թէ այդ արդիւնաբերութիւնը վերջին տարիներում կրկնապատիկ շահաւէտ է դարձել, և այժմ ձեռք է բերվում 159 միլիոնի քարածուխ, մինչդեռ մի քանի տարի առաջ հազիւ հասնում էր 80 միլիոնի։ Ճշմարիտ է վերջին տարիներում բանւորների վարձն էլ մի փոքր աւելացել է, (տարեկան 740 մարկից հասել է մօտ 900 մարկի) բայց բոլորովին համեմատական չէ այն մեծ շահին, որը ստանում են հանքագործարանատէրերը։ Եւ ահա այդ դրական երևոյթի վրա են հիմնված մասամբ և այն պահանջները, ո-

---

մուլի միջից, և որի գլխաւոր ղեկավարի ամենամեծ քաջութիւնը զէյթունցիների փողերի ուտելն է, իսկ ամենագլխաւոր յատկութիւնը պատկառանք չունենալը։

Արշակաւանի այդ խմբի հետ, որոնց մէջ պատահմամբ թէ սխալմամբ ընկել էին մի երկու համակրելի երիտասարդներ (որոնց ընտրութիւնը մինչև անգամ ցանկալի կարող էր համարվել), մի ժողովում նստել և դրական հարցերի մասին վիճելը արդէն—ուղղակի ասած—մի անպատուութիւն էր, որ այնու ամենայնիւ յանձն առան ընկերութեան վերակենդանութեան համար աշխատողները....

Առաջին ընդհանուր ժողովը, այնու ամենայնիւ, անվայել և ժողովին արատ բերող գործողութիւնների չենթարկվեց։ Առանց դժուարութեան կարելի եղաւ ներս նշանակել ընկերութեան անցեալ ղեկավարներին և նրանց ուղղութեան և ապա անցնել նոր ղեկավարների ընտրութեան։ Այդ օրը ընտրվեցան նախագահ և փոխ-նախագահ միայն. այն է պ. Փ. Վարդանեան և բժշկապետ Տէր-Գրիգորեան։

—

Ընտրութիւնների շարունակութիւնը տեղի ունեցաւ ապրիլի 14-ին աւելի շատ անդամների ներկայութեամբ և աւելի տաքացած կերպով։

Սակայն այդ ժողովում արդէն սկսեց երևալ ամենքի գոյնը։ «Արձագանքականները» սկսեցին իրանց գոյնը փոփոխել, որպէս զի հաւատարիմ լինեն «Արձագանք» շաբաթաթերթի անկայունութեան։ Պ. Յովհաննիսեանի վերընտրութիւնը արդէն մի ցնորք էր համարվում, և այդ պատճառով նրա մարդիկ, վրէժն առնելու համար, թէ մի ուրիշ պատճառով, սկսեցին դաշնակցութիւն կապել այն խմբի հետ, որին մենք արշակաւանի խումբ անուանեցինք, և մոռանալով իրանց՝ պարզ կերպով ձեռք մեկնեցին նրան։ «Արձագանքականները», առանց թագցնելու, ձեռք մեկնեցին միւս խմբակին, որպէս զի նրանց հետ միասին, ինչպէս իրանք էին ասում, «Մշակականներին» սևացնեն։

Իրանց մարդկանց անցկացնելու համար, այդ անանուն խմբակը սկսեց զիմել ամենաաններելի միջոցների. դրանցից միայն բաւական է յիշել այն, որ առանց վարչութեան ընտրութեան, ժողովի անդամ գրել տուին մի պարոնին, նրա ընտրութիւնը, հակառակ կանոնադրութեան, ենթարկեցին ընդհանուր ժողովի քուէարկութեան, օգուտ քաղելով նախագահի՝ պ. Յ. Տիգրանեանի թուլութիւնից։

Նպատակին հասնելու համար՝ թոյլ տալ ամենաաններելի միջոց,—դարձաւ նշանաբան այդ մարդկանց համար, և ժողովը ստիպված էր «յանուն ընկերութեան ապագայի» լռել, և տանել մի այդպիսի անկանոնութիւն։

Բայց գոնէ դրանով վերջանային անկանոնութիւնները և խայտառակութիւնները.....

Ոտի տակ տալ կանոնադրութեան կէտերը, ժողովում թոյլ տալ փողոցին յատուկ օյինաբութիւններ, մոռանալ թէ պատկառանք և թէ մարդավարութեան ամենահասարակ պահանջները, մինչև անգամ խարդախութիւններ անել՝ քուէներ դցելիս,—ահա այն բոլորը, ինչ որ կարմիր դծով անցնում էր դրական մի ընկերութեան ընդհանուր ժողովում, մի խմբակի շնորհով, այն էլ մի այնպիսի ժողովում, ուր խռնված էր ահագին բազմութիւն, Թիֆլիսի ինտելիդէնցիայի գործունէութեան ականատես լինելու....

Կանդիդատների արժանաւորութիւնը մոռացվեց, և «արձագանքականների» մեծ մասը,—մի քանիսների բացառութեամբ, որոնց մէջ մենք չենք կարող չը յիշել պ. Ն. Տէր-Ղևոնդեանին,—միանալով Արշակաւանի խմբի հետ, սկսեցին առաջ մղել մի քանի մութ մարդկանց թեկնածութիւնը։ Խայտառակութիւնը այնտեղ հասաւ, որ այդ երկու խմբերը միանալով, սևացրին մի այնպիսի արժանաւոր կանդիդատին, ինչպիսին էր խմբագրական մասնաժողովի համար մի յարգելի պարոն, որպէս զի ընտրեն այս և այն պրիկաշչիկին։ Իսկ գիտէք, ընթերցող, ինչ էր այդ մարդկանց գլխաւոր հիմքը այդ պարոնին սևացնելու գործում,—այն, որ նա իրանց խմբին չէ պատկանում։

Չեմ էլ խօսում, որ կուսակցական նկատումներով կուրացած «արձագանքականները» այնքան տեղը փրփրել էին, որ սևացրին և մի այնպիսի կանդիդատին, ինչպիսին է վարչութեան համար պ. Տիգրան Նազարեան, ոչ թէ նրա համար որ մի ուրիշ կանդիդատ կար, նոյն իսկ պ. Նազարեանի հետ հեռաւոր նմանութիւն ունեցող, այլ միայն այն պատճառով, որ «Արձագանքը» բանակռիւ է ունեցել «Աղբիւրի» աշխատակից պ. Աղայեանցի հետ։ Ի՞նչ անուն տալ այդ վարմունքին....

Սակայն այլ առակ լուարուք։ «Արձագանքի» խմբի մեծամասնութիւնը, որը, անկասկած իրան աւելի զարգացած է համարում, և աւելի հակացող, քան թէ Թիֆլիսի զանազան ընկերութիւնների և հաստատութիւնների մէջ գործող կոմերսանտները, իրան թոյլ տուեց միանալ Արշակաւանի խմբի հետ, և ընտրել նրա թայֆաբաշուն խմբագրական մասնաժողովի համար, դուցէ ի վարձատրութիւն այն անպատուութեան, որ նա բերում է հայոց ինտելիդէնցիային, հայոց մամուլին.... և մոռանալով, որ այդ մարդը տարիներից ի վեր բոլոր ընտրութիւնների ժամանակ անպայման սևացել է, որը և եղել է վարձատրութիւն նրա բացառիկ արժանաւորութիւնների....

Գիտենք իրանք «արձագանքականներն» էլ համոզված են, որ դա պատիւ չէ բերում ոչ իրանց և ոչ ընկերութեան։ Սակայն, ինչպէս ասում են, այդ քայլը «արձագանքականները» արեցին երկու նպատակ ունենալով. նախ դրանով ընկերութեան վերակենդանութեան համար աշխատողներից և ապա պ.Յովհաննիսեանի խմբից հեռացողներից վրէժխնդիր լինեն, ջիղը հանեն։ Բայց երկրորդ նպատակի վերաբերմամբ «արձագանքականները» սխալվեցան և քթով մնացին։ Այդ պարզելու համար, ընթերցող, պէտք է պատմել մի կուրիոզ։ «Արձագանքականները» պայման են կապում արշակաւանի խմբի հետ, որ իրանք զէյթունցիների խնամակալին և նրա մի ջուխտ ու մի կենտ բարեկամներին ձայն կը տան, այն պայմանով, որ դրանք էլ իրանց ձայն տան։ Հասարակական փողեր մաքրազարդողը համաձայնվում է,—բայց միթէ այդպիսի մարդկանց համար խօսք տալ և չը կատարելը սրբապղծութիւն է։ Տեղի է ունենում քուէարկութիւնը. արշակաւանցի գլխաւորը ընտրվում է, իսկ «արձագանքականների» միւս կանդիդատները չեն ընտրվում, որովհետև առաջինները դաւաճանում են իրանց խօսքին և ձայն չեն տալիս։ Տեղն է.... Եւ, անկասկած, պ. Յովհաննիսեան, իբրև աւելի փորձառու, լաւ քաջած կը լինի իր մարդկանց ականջները այդ տեսակ միամտութեան համար...

Թող ուրեմն չը մոռանայ «Արձագանքի» խումբը իր այդ քաջագործութիւնը....

(Կը շարունակվի)

բոնք, պէտք է ասել, ներկայումս ընդհանուր են ամբողջ բանւորական դասակարգի համար։

Բաւականութիւն տալ այդ պահանջներին—կը նշանակի արմատախիլ անել բանւորական չարժումը։ Իսկ թէ ինչ կերպով կը վերաբերվի այդ հարցին գերմանական կառավարութիւնը, այդ կիմացվի մօտիկ ապագայում։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ողորմելի ‹Արձագանքը› և նրա ողորմելի խմբագիրը այնտեղ են հասել, որ սկսել են արդէն զառանցել (դել տալ)։ ‹Մշակի› գործունէութեան այն պէրիոդը, որը անկողմնապահ ապագայ սերունդները կը համարեն ‹Մշակի› ամենափայլուն և ամենաօգտաւէտ պէրիօդ, երբ ‹Մշակը› ռուս-թիւրքաց պատերազմի ժամանակ այնպիսի գործ է կատարել և այնպիսի դեր է խաղացել, որը շատ հազիւ է վիճակվում դաւառական մամուլին,—այդ պէրիօդը «Արձագանքի› իդիօտները համարում են ‹Մշակին› ամօթ բերող գործունէութիւն։ Եթէ դա հիւանդ, քայքայված ուղեղի զառանցում չէ,—ապա ինչ է։

* *

Փարիզի համաշխարհային ցուցահանդիսի հրաշալիքներից մի քանիսը հետևեալներն են։ Օրինակ հանդէս է դրված մի ոսկէ չղթայ, որը 8 արշին երկարութիւն ունի, բայց որը այնքան բարակ է՝ որ ամբողջապէս դարսվում է մի հասարակ մատնոցի մէջ։ Նմանապէս հանդէս է դրված մի նաւակ, որը ջրից հանելուց յետոյ անմիջապէս կարելի է նրանից մի կառք սարքել։ Մեքենագործական բաժնում հանդէս է դրված մի չոգեշարժէջ, որի մի հատ ցիլինդրը կշռում է 1,400 պուդ։ Էլէկտրական բաժնում հանդիսականների ուշադրութիւնն է գրաւում մի լապտեր, որը 15,000 բոց ունի։ Ապակեայ բաժնում գտնվում է մի ամբողջ հայելի, որի բարձրութիւնը 3 սաժէն է, իսկ լայնութիւնը 2 սաժէն։ Անտառային բաժինը նմանապէս հետաքրքիր նմուշներ է ներկայացնում. Ամերիկայից բերված է կարմիր փայտի մի գերան, որը 350 պուդ է կշռում և որի տրամագիծը 1 սաժէնի է հաւասար. Աւստրիայից ուղարկված է մի ծառ, որը 3 սաժէն բարձրութիւն ունի և որի բունի շրջապատը հաւասար է 2 սաժէնի. Վօժեան սարերից բերված է մի ծառ 22 սաժէնի բարձրութեամբ, վերջապէս Ամերիկայի Ամազոն գետի ափերից բերված է մի պատատուկ բոյսի տեսակը, որը 100 սաժէն երկարութիւն ունի և կշռում է 100 պուդից աւելի։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մայիսի։ Ստատս-սեկրետար Բէննէնկամպֆ նշանակված է Նորին Մեծութեան սեփական գրասենեակի կառավարիչ։

ՄՕՍԿՎԱ, 5 մայիսի։ Սերբական օթեանի եկեղեցու մէջ կատարված պատարագից յետոյ, միտրոպոլիտ Միխայիլ այսօր, 12½ ժամին ճանապարհ ընկաւ Մոսկվայից՝ Կուրսկի երկաթուղով։ Միտրոպոլիտի յարգողներից շատերը ճանապարհ էին գցում նրան։

ԲԵՐԼԻՆ, 5 մայիսի։ Վէստֆալեան հանքագործական բանւորների Բերլին եկած պատգամաւորները և Բէյխստագի անդամ Գալմախէր, որպէս ներկայացուցիչ վէստֆալեան հանքատէրերի, պայմանաւորվեցան մշակել համաձայնութեան հիմնական սկզբունքները։ Համաձայնութեան էական կէտերը հետևեալներն են. ութ-ժամեայ օրական աշխատանք, չը հաշուելով հանքայրերը մտնելու և նրանցից դուրս գալու ժամանակամիջոցը, արտատոր աշխատանքների վերացնելը, որոնք թոյլատրվում են միմիայն արտակարգ դիպուածներում, և այն էլ բանւորներից ընտրվելի պատգամաւորների հետ նախապէս համաձայնութիւն կայացնելուց յետոյ։ Վերջապէս վճռված է բանւորների օրավարձն էլ յայտնի չափով աւելացնել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիսի։ Բարձրագոյն ուկազով նշանակված են. Թագաժառանգ Ցեսարեվիչը պետական խորհրդի և մինիստրական մասնաժողովի անդամ. Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ—գիտութեան ճեմարանի նախագահ, և Ներքին գործերի մինիստրութեան կառավարիչ Դուրնովո—Ներքին գործերի մինիստր, արձակելով նրան Կայսրուհի Մարիայի հիմնարկութիւնների վերաբերեալ Նորին Մեծութեան գրասենեակի գլխաւոր կառավարչի պաշտօնից։—Բարձրագոյն ըէսկրիպտ Ներքին գործերի մինիստրի անունով. ‹Իվան Նիկոլաեվիչ՝ կոչելով կոմս Դիմիտրի Անդրէեվիչ Տոլստոյին կատարելու Ներքին գործերի մինիստրի պաշտօնը, Ես գիտէի, որ դէպի գահը և հայրենիքը ունեցած նրա հաւատարմութիւնը, նրա պետական խելքը և առողջ սկզբունքներին հաւատարիմ լինելը կարող են արդարացնել իմ հաւատը, և որ նրա հաստատուն ղեկավարութեան ներքոյ՝ իշխանութեան գործունէութիւնը ուղղած կը լինի դէպի պետութեան մէջ կարգ հաստատելուն և օրէնքին ճշդութեամբ ենթարկվելու գործին։ Տարաբաղդաբար կոմս Տոլստոյ վախճանվեց, անկարող լինելով բոլորովին աւարտելու իրան յանձնված գործը և իրագործելու բոլոր իմ նախորոշումները։ Ես ընտրեցի և նշանակեցի ձեզ նրա յաջորդ իբրև նրա կառավարչութեան սկզբի միջոցի ամենամօտիկ աշխատակցին, ի նկատի ունենալով, որ ձեզ ամենից լաւ են յայտնի նրա ընթացքը և մտածութիւնները։ Ցոյս ունեմ որ դուք կը շարունակէք նրա սկսած գործը նոյն հաստատամտութեամբ և այն սկզբունքների հետ հաստատ համերաշխութիւն պահպանելով, որոնցով նա ղեկավարվում էր՝ իմ ցուցմունքներով›։—Կոմսուհի Սոֆիա Դմիտրիեվնա Տոլստոյա իր անկեղծ շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր անձանց և հաստատութիւններին, որոնք ցաւակցութիւն էին արտայայտել նրա ամուսին կոմս Տոլստոյի մահվան առիթով։ Ամեն կողմից արտայայտված անկեղծ յարգանքը դէպի հանգուցեալի յիշատակը՝ խորին կերպով շարժում է իր սիրտը, և մասամբ թեթևացնում է ծանր կորուստի ազդեցութիւնը։

ԱԹԷՆՔ, 6 մայիսի։ Թագաւորական ամբողջ ընտանիքը մայիսի 27/15-ին ուղևորվում է դէպի Պետերբուրգ։

ՎԻԵՆՆԱ, 6 մայիսի։ Լուրերին նայելով, կոբուրգեան պրինցը Փարիզի ցուցահանդէս գնացած ժամանակ ամուսնանալու է Օրլէանեան տան իշխանուհիներից մէկի հետ։

ԲՐԼՍԼԱՎԼ, 6 մայիսի։ ‹Deutschland› քարածուխի հանքում, և Բէյաէնի մօտ, գործադուլի պատճառով անկարգութիւններ եղան։ Կարգը պահպանելու համար այդ կողմերը ուղարկված է 2 վաշտ զօրք։

ԶԱՐԶՈՒ, 8 մայիսի։ Զարվիլաէից եկող ափգանացիները պատմում են, որ Արզուրահմանխանը դեռ ևս Մաղարի-Շերիֆումն է գտնվում։ Խհաակ-խանի ապստամբութեանը մասնակցողների մահվան պատժի ենթարկելը, իրաւ է, կատարեալ վերջացաւ, բայց Խհաակ-խանի կուսակիցների հաղարաւոր ընտանիքները աքսորվում են ափգանական Թուրկեստանի սահմանները։ Գաղթականները բնակութիւն են հաստատում առաւելապէս բուխարական խանութեան լեռնական բէկութեան մէջ։

ԿԻԷՎ, 8 մայիսի։ Այստեղ ժամանեց երէկ սերբական միտրոպոլիտ Միխայիլը և ժամանակաւորապէս իջևանեց վանքում։

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա), 8 մայիսի։ Երէկ երեկոյեան, դէպի Պետերբուրգ ուղևորվելով, ժամանեց այստեղ պարսից շահը, որին հանդիսաւոր կերպով դիմաւորեցին զօնեան զօրքի ատամանը, պատուաւոր զօրքը և ժողովրդի մեծ բազմութիւն։

ԷՍՍԷՆ, 8 մայիսի։ Վէստֆալեան գործադուլ արած հանքագործները վճռեցին սկսել աշխատանքները։

ՀՌՕՄ, 8 մայիսի։ Ումբերտոս թագաւորը՝ թագաժառանգի, մինիստր-նախագահ Կրիսպիի և բազմաթիւ սվիտայի հետ միասին երէկ Բերլին ուղևորվեց, փոխադարձ այցելութիւն անելու Վիլհելմ կայսրին։

ԲԷԼԳՐԱԴ, 8 մայիսի։ Սկուպշչինայի ընտրութիւնները նշանակված են սեպտեմբերի 14-ին, իսկ սկուպշչինան գումարվելու է հոկտեմբերի 1-ին Բէլգրադում։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 5-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	93 ր.	35	›
Բերլինի վրա 100 մարկ —	45 ›	60	›
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36 ›	90	›
Ոսկի — արժէ —	7 ›	50	›
Մաքսային կուպօններ —	149 ›	50	›
Արծաթ — — —	1 ›	13	›
Բօրսային դիսկօնտներ —	5 և 6¼%		
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99 ›	62	›
— — — — 2-րդ —	99 ›	62	›
— — — — 3-րդ —	99 ›	62	›
— — — — 4-րդ —	99 ›	62	›
— — — — 5-րդ —	99 ›	62	›
— — — — 6-րդ —	99 ›	62	›
Նոր 4%	86 ›	25	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	100 ›	37	›
— — 2-րդ —	100 ›	37	›
— — 3-րդ —	100 ›	75	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	271 ›	50	›
— երկրորդ —	245 ›	50	›
5½% րէնտա	102 ›	75	›
Ոսկեայ րէնտա	171 ›	75	›
Եօթերորդ կօնսօլիդ. փոխառ.	138 ›	87	›
Նոր երկաթուղային րէնտա	99 ›	87	›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	146 ›	50	›
— — թղթադ.	94 ›	75	›
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	98 ›	—	›
Գիւղական բանկի	103 ›	—	›
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	98 ›	25	›
— —Ռութայիսի-18 և 43տ.	98 ›	25	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	95 ›	—	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94 ›	50	›
Օդէսայի — —	96 ›	75	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	84 ›	50	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնն ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԶՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, (և ատամնացաւի), սիֆիլիսի և աչքի ց. բացի կիրակի։
ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11¼—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի։
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքչաբթի, ուրբաթ և կիւրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոթերապիա)։
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—6½—7½ ժամ.
Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մօղեր և Երևանցեան։
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

РОСКОШНОЕ ИЗДАНІЕ.

Большая хромо-фото-литографическая точная копія съ знаменитой картины художника А. А. Иванова

„ЯВЛЕНІЕ ХРИСТА НАРОДУ“

Съ подлинника, хранящагося въ Московскомъ Публичномъ Румянцевскомъ Музеумѣ.—Огромныхъ размѣровъ хромо-фото-литографія художественно исполненная.—Пояснительный историко-біографическій текстъ составленъ И. Ѳ. Токмаковымъ.

Картина ‹Явленіе Христа Народу›, писанная художникомъ А. А. Ивановымъ въ теченіе тридцати лѣтъ,—сдѣлала цѣлую эпоху въ русской живописи; знаменитые художники какъ-то: Крамской, А. Праховъ и многіе друг. нашли, что означенная картина болѣе проникнута истинно-религіознымъ духомъ и вѣрнѣе, въ историческомъ отношеніи, библейскому характеру событій, чѣмъ всѣ доселѣ извѣстныя заграничныя картины и иллюстрацій подобнаго рода, не исключая и Доре.

Н. В. Гоголь въ своемъ знаменитомъ этюдѣ о картинѣ: ‹Явленіе Христа Народу› раскрылъ намъ величіе истинно-русскаго и православнаго творчества Иванова и указалъ на него, какъ на главу русской живописи; это же подтверждаетъ и А. Праховъ въ статьѣ своей: Матеріалы для біографіи А. А. Иванова (жур. ‹Пчела› за 1875 г. № 23 и № 24). Равно какъ о помянутой картинѣ были вполнѣ сочувственные отзывы въ журналахъ ‹Воскресный досугъ› 1867 г. № 231 и ‹Иллюстрированная недѣля› 1874 г. Нельзя такъ же не указать и на отзывъ Архимандрита Ѳеодора о картинѣ Иванова СПБ. 1859 г.

Цѣна хромофото-литографической картинѣ: Лакированная на бумагѣ—1 р. 50 коп., на холстѣ 2 р. 50 коп. За пересылку и упаковку на скалкѣ 50 коп. Подписавшимся на 10 и болѣе экз.—20% уступки.

Адресъ: Москва, Мясницкая, магазинъ церковныхъ утварей Сытовы сыновья, соб. домъ.

5—5

Շուտով տպագրութեան կը յանձնվի

ՍՐԻՆԳԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ

մի հատորը, որ բաղկացած կը լինի 150—200 երեսից. գիրքը կը տպվի մաքուր և շքեղ թղթի վրա։ Սկզբից սաորագրողների համար գինը 50 կոպէկ է։ Ցանկացողները կարող են դիմել այս հասցէով. Шулаверы (Тиф. губ.) Аршаку Меграбянъ.

2—3

Լոյս տեսաւ

ՏԻԳՕ

ՂԱԼԻ ԱԴԱԹՆԵՐԱՆ

պատկերներ

ՃԸՊԱՏԸՑ ՔՕԼԱԴ ԿՏՐԻ

(Շուշա-Ղալի բարբառով)

Գինն է 1 ր.

Ճանապարհածախսով 1 ր. 20 կ.

Փառակազմ 2 ր.

Դիմել „ԱՂԲԻՒՐԻ“ վաճառանոցը։

5—6

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публичлекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Ь)

Дозволено цензурою, Тифлисъ 8 Мая 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.